

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Միսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Միսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015 թվականի N 20

ԱՎԱԳԱՆՈՒ 29.10.2015Թ.ԿԱՅԱՑԱԾ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով

Հաստատել ավագանու 29.10.2015թ. հերթական նիստի օրակարգը.

1. Նիստի օրակարգը հաստատելու մասին հարցը
Զեկ. Ս. Թարթիկյան

2. Արարատի մարզի Միսավան համայնքի 2015 թվականի
բյուջեում լրացումներ և փոփոխություններ կատարելու
մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

3. Միսավան համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների
իրականացման կարգը հաստատելու մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

4. Միսավան համայնքում կառուցապատման թուլտվությունների
տրամադրման կարգը հաստատելու մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍՄՐԱՍ

4. ՀՈԿԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ


5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6. ՄԿՐՏՉՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Միսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Միսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015 թվականի N 21-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով

1. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել

ա / Բարձրագույն կրթություն տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեի» 4729 հոդվածին՝ 140.0 հազ. դրամ պլանը սահմանել 1140,0 հազ. դրամ:

բ / հանգիստ մշակույթ և կրոն տնտեսագիտական դասակարգման «ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» 4239 հոդվածին՝ 80.0 հազ. դրամ, պլանը սահմանել 80,0 հազ. դրամ:

2. վարչական բյուջեի պահուստային ֆոնդը սահմանել 8.3 հազար դրամ:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍՄԲԱՏ

4. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6. ՄԿՐՏՉՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 22-Ն

ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐԻ ԿԱՄԱԿՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով՝

Հաստատել համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը՝
համաձայն հավելվածի :

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ


3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍՄԲԱՏ

4. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6. ՄԿՐՏՉՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ՀԱՄԱՅՆՔԻ



ՄՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱԿՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Սիսավան համայնքի ղեկավարին (այսուհետև՝ համայնքի ղեկավար) վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համայնքի ղեկավարը իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով թվարկված և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով վերապահված կամավոր լիազորություններ: «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով համայնքի ղեկավարը իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները՝

Պաշտպանության կազմակերպման բնագավառում՝

- 1) աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը:
- 2) աջակցում է զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, ինչպես նաև զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը:
- 3) աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում՝

- 1) իրականացնում է բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը:
- 2) իրականացնում է կառուցապատման աշխատանքները:
- 3) կազմում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված, ըստ անհրաժեշտության մշակվող, քաղաքաշինական փաստաթղթերի նախագծերը:
- 4) կազմակերպում է հանգստի վայրերի խնամքը և պահպանությունը:
- 5) կազմակերպում է սանիտարական մաքրման կայանքների շինարարությունը և շահագործումը:

Հողօգտագործման բնագավառում՝

- 1) իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքներ:
- 2) իրականացնում է ներտնտեսային հողաշինարարական աշխատանքներ:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում՝

- 1) աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը:
- 2) աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը:

3) հաշվառում, դասակարգում և տարածում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային, բնական և տուրիստական-ռեկրեացիոն ռեսուրսների մասին տեղեկատվությունը:

4) աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը:

5) աջակցում է հանրակրթական դպրոցների գործունեությանը:

Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում`

1) աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը:

2) աջակցում է առողջապահական մարմինների` սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը:

3) նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն, ստեղծում է հանգստի գոտիներ:

Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում`

1) նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ:

2) միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

Գյուղատնտեսության բնագավառում`

1) աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:

2) աջակցում է տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին:

3. Յուրաքանչյուր տարի կամավոր լիազորությունների իրականացման համար համայնքի ղեկավարին կարող է նախատեսվել հատկացնել ֆինանսական միջոցներ, որը չի կարող գերազանցել այդ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 10%-ը:

4. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման համար պահանջվում է ֆինանսական միջոցների հատկացում` համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման չափերի մասին ավագանու որոշումների դեպքերում:

5. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում` համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

6. Կամավոր լիազորությունների իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

7. Այն դեպքում, երբ կամավոր լիազորության իրականացումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ առաջարկությունը` նշելով օրենսդրությամբ նախատեսված լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

8. Այն դեպքում, երբ կամավոր լիազորության իրականացումը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, նախաձեռնողը համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ դիմում` նշելով օրենսդրությամբ նախատեսված լիազորության տեսակը, դրա համար

անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը, անհրաժեշտության հիմնավորումը և դրա պատճառը, անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

9. Համայնքի ղեկավարը դիմումը և սույն կարգի 8-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝

1) կամավոր լիազորության իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր լիազորության իրականացման համար գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերը և ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և այդ մասին տեղեկացնում է նախաձեռնողին:

2) կամավոր լիազորության իրականացմանը չհամաձայնելու դեպքում նախաձեռնողին՝ գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

10. Եթե կամավոր լիազորության իրականացման նախաձեռնողը սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում համայնքի ղեկավարից չի ստանում կամավոր լիազորության իրականացմանը չհամաձայնելու մասին գրավոր պատասխան կամ իր փաստաթղթերը համայնքի ավագանուն ուղարկելու վերաբերյալ գրություն կամ եթե նախաձեռնողը համաձայն չէ կամավոր լիազորության իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու մասին հիմնավորումներին, ապա 20-օրյա ժամկետում համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի կրկնօրինակը՝ սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին, իսկ կամավոր լիազորության իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու վերաբերյալ գրավոր պատասխանի առկայության դեպքում՝ այդ պատասխանի վերաբերյալ իր առարկությունները և ավագանուն ուղղված դիմումը ներկայացնում է վերջինիս քննարկմանը:

11. Համայնքի ավագանին սույն կարգի 8-րդ կամ 10-րդ կետերում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց, ինչպես նաև իր նախաձեռնությամբ կամավոր լիազորության իրականացման դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարցը քննարկելուց հետո ընդունում է որոշում կամավոր լիազորության իրականացման համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

12. Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են՝ կամավոր լիազորության իրականացման լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը, իսկ կամավոր լիազորության իրականացումը մերժելու դեպքում մերժելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

13. Համայնքի ղեկավարը զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով՝ իր որոշմամբ հասարակական հիմունքներով կազմում է մշտական գործող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են՝ համայնքի ավագանու անդամները, հասարակական կազմակերպությունների և միավորումների ներկայացուցիչները, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների մասնագետները, ինչպես նաև համայնքի բնակիչները և այլ շահագրգիռ անձինք, եթե նրանք այդ մասին նախապես տվել են իրենց համաձայնությունը:

14. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համայնքի ղեկավարին վերապահված այլ կամավոր լիազորությունների իրականացման համար համայնքի ղեկավարը կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

15. Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները ավագանու կողմից քննարկվում են միայն մշտական գործող հանձնաժողովի կողմից կամավոր լիազորության իրականացման

եզրակացության և անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության հիմնավորման առկայության դեպքում:

16. Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկնագամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է հիսուն հազար դրամ: Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական օգնության կարող է հատկացվել առավելագույնը 2 անգամ, որի չափը չի կարող գերազանցել սոցիալական օգնության առավելագույն չափի 1,5-պատիկի չափը: Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձանց, համայնքի ղեկավարի, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին և համայնքի ղեկավարի մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, երեխա):

17. Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին ուսման վարձի հատկացումը կարող է իրականացվել միայն պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու դեպքում և առավելագույնը կարող է հատկացվել տարեկան 2 անգամ՝ տարեկան ուսման վարձի 20 %-ի չափով: Արգելվում է ուսման վարձի հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձանց, համայնքի ղեկավարի, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին, մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, երեխա), եթե վերջիններս վարում են համատեղ տնտեսություն:


18. Համայնքի ավագանու կողմից սույն կարգով չնախատեսված կարգով կամավոր լիազորությունների իրականացումն արգելվում է:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ



ՀՈԿԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Միսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Միսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 23-Ն

ՄԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԹՈՒՅԼՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16 –րդ հոդվածի 27– րդ կետի պահանջներով՝

Հաստատել Արարատի մարզի Միսավան համայնքում կառուցապատման թույլտվություն-
ների տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի :

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍՄԲԱՏ

4. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6. ՄԿՐՏՅԱՆ ՄԿՐՏԻՉ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ԿԱՐԳ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Արարատի մարզի Սիսավան համայնքի բնակելի, հասարակական, արտադրական նշանակության օբյեկտների և դրանց համալիրների կառուցապատման թույլտվությունների տրամադրման պարտադիր պայմաններն ու պահանջները:
2. Կառուցապատման թույլտվությունները տրամադրվում են երեք հաջորդական փուլերով՝ նախագծման թույլտվություն (կամ ճարտարապետահատակագծային առաջադրանք), շինարարության թույլտվություն և շահագործման թույլտվություն (կամ ավարտված շինարարության շահագործման փաստագրում):
3. Կառուցապատման թույլտվությունների տրամադրման ընթացակարգերը և դրանց հետ փոխկապակցված գործառույթները տարբերակվում են, կախված օբյեկտի ռիսկայնության աստիճանից՝ սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

II. ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Սույն կարգում օգտագործված են հետևյալ հասկացությունները՝
 - 1) **կառուցապատման թույլտվություններ** - քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով իրավասու մարմնի կողմից կառուցապատողին տրվող թույլատվական փաստաթղթերի համակարգ.
 - 2) **իրավասու մարմին** - կառուցապատման թույլտվություններ տրամադրող այն համայնքի ղեկավարը, որի վարչական սահմաններում է գտնվում կառուցապատվող անշարժ գույքը (հողամասը, շենքը, շինությունը).
 - 3) **մատակարար կազմակերպություններ** - ինժեներական սպասարկում իրականացնող ջրամատակարարման և ջրահեռացման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, հեռահաղորդակցության ոլորտներում սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպություններ.
 - 4) **տեխնիկական պայմաններ** - ինժեներական ենթակառուցվածքի համակարգերին միանալու նախագծման պայմաններ, որոնք տրվում են մատակարար կազմակերպությունների կողմից իրավասու մարմնին՝ վերջինիս հարցման հիման վրա.
 - 5) **երաշխավորագրիր** - Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ նախագիծը թողարկող կամ շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագիր.
 - 6) **համայնքի տարածական պլանավորման (կամ քաղաքաշինական ծրագրային) փաստաթղթեր** - համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծ և քաղաքաշինական գոտիավորման նախագիծ.
 - 7) **հիմնական (կապիտալ) շենք, շինություն** - երկարատև շահագործման համար նախատեսված և հողի հետ անխզելիորեն կապակցված՝ վերգետնյա և ստորգետնյա (կամ միայն ստորգետնյա) կառուցվածքներ ունեցող շինարարական օբյեկտ, որի տեղափոխումն անհնարին է առանց անհամաչափ վնաս հասցնելու այդ օբյեկտի կամ դրա մասերի ամբողջականությանն ու հողի ծածկույթին.
 - 8) **ոչ հիմնական շինություններ** - առևտրի, սպասարկման, կենցաղային և՛ այլ նպատակներով օգտագործվող շինություններ, որոնք տեղադրվում են հողի մակերեսին (հողի մակերեսի բարեկարգման ծածկույթի վրա), հողի մեջ չունեն հիմքեր, չեն պահանջում թաց շինարարական պրոցեսներ և անհրաժեշտության դեպքում կարող են անջատվել հողից՝ առանց էական վնաս հասցնելու հողի ծածկույթին կամ այդ շինությանը.

- 9) **կառուցապատման (ծավալատարածական) չափորոշիչներ** – տարածական պլանավորման փաստաթղթերով ամրագրված պահանջներին համապատասխան՝ կառուցապատման բնույթն ու օգտագործման աստիճանն արտահայտող համակողմանի ցուցանիշներ (կառուցապատման խտության գործակից, շենքերի ու շինությունների բարձրություն, կառուցապատված, կանաչապատ մակերեսների հարաբերակցություն և այլն)։
- 10) **նախագծման թույլտվություն կամ ճարտարապետահատակագծային առաջադրանք** – փաստաթուղթ, որը սահմանում է քաղաքաշինական գործունեության տվյալ օբյեկտին ներկայացվող նախագծման պարտադիր պահանջները, պայմաններն ու սահմանափակումները։
- 11) **շինարարության (տեղադրման) թույլտվություն** – փաստաթուղթ, որը հաստատում է կառուցապատողի՝ ինչպես նոր կառուցապատման նպատակով սահմանված կարգով տրամադրված հողամասում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում որոշակի շինարարական գործունեություն իրականացնելու կամ ոչ իմնական շինություն տեղադրելու իրավունքը։
- 12) **քանդման (ապամոնտաժման) թույլտվություն** – փաստաթուղթ, որը հաստատում է սեփականատիրոջ կամ նրա կողմից սահմանված կարգով լիազորված անձի՝ շենքերն ու շինությունները քանդելու (ապամոնտաժելու) իրավունքը։
- 13) **շահագործման թույլտվություն կամ ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտ** – փաստաթուղթ, որը հավաստում է ավարտված շինարարական օբյեկտը (շենքեր, շինություններ, դրանց վերակառուցում, վերականգնում, ուժեղացում և բարեկարգում)՝ դրա գործառնական նշանակությամբ շահագործվելու իրավունքը։
- 14) **քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն (փորձագիտական եզրակացություն)** – նախագծային փաստաթղթերով ընտրված լուծումների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանության վերաբերյալ լիցենզավորված կազմակերպության կողմից տրվող եզրակացություն։
- 15) **բազմակի օգտագործման օրինակելի նախագծեր** – քաղաքաշինության բնագավառի պետական լիազորված մարմնի կողմից կիրարկման մեջ՝ դրված ճարտարապետաշինարարական նախագծեր, որոնք կարող են օգտագործվել տարբեր կառուցապատողների կողմից՝ իրենց ցանկությամբ։
- 16) **գրասենյակ** – գործավարության, հաշվապահական հաշվառման, փաստաթղթաշրջանառության, տեղեկատվության փոխանակման (այդ թվում՝ համակարգչային եղանակով), ծրագրերի մշակման (այդ թվում՝ համակարգչային ծրագրավորման ու նախագծման) և (կամ) հաշվապահական, իրավաբանական կամ այլ մասնագիտական ծառայությունների մատուցման համար օգտագործվող սենք (սենքեր)։
- 17) **մասնագիտական եզրակացություն** – պատմամշակութային հուշարձանների պահպանության և օգտագործման, քաղաքաշինության և ճարտարապետության, առողջապահության (սանիտարահիգիենիկ փորձաքննություն), հրդեհային և տեխնիկական անվտանգության, տրանսպորտային անվտանգության և այլ ոլորտների՝ օրենքով նախատեսված դեպքերում պետական կառավարման համապատասխան լիազորված մարմինների կողմից տրվող եզրակացություն։
- 18) **քաղաքաշինության բնագավառի «սերտիֆիկացված» արտադրանք** – Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս իրականացված և օրենքով սահմանված կարգով համապատասխանության գնահատման ճանաչում ստացած ճարտարապետաշինարարական նախագիծ և/կամ շինարարական կոնստրուկտիվ համակարգի մասեր։
- 19) **ճարտարապետական մրցույթ** – կառուցապատման լավագույն լուծումների ընտրության նպատակով կառուցապատողի կողմից հայտարարվող ճարտարապետական հրապարակային մրցույթ, որի անցկացման միջոցով ձեռք է բերվում օբյեկտի նախագծային փաստաթղթերի մշակման իրավունքը։
- 20) **կառուցապատող** – քաղաքաշինական գործունեություն իրականացնող՝ անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունքով օժտված անձ։
- 21) **ծանուցում** – դիմողին (հայտատուին) պատշաճ ձևով (էլեկտրոնային համակարգի միջոցով առաքված կամ ստորագրությամբ առձեռն հանձնված, կամ պատվիրված նամակով ուղարկված) ներկայացված տեղեկատվություն։

5. Սույն կարգով օգտագործվող այլ հասկացությունները կիրառվում են «Քաղաքաշինության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ օրենքների և իրավական ակտերի իմաստով։

III. ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. Կառուցապատման նպատակով քաղաքաշինական գործունեությունն իրականացվում է համայնքի գլխավոր հատակագծով և գոտիավորման նախագծով սահմանված հողի նպատակային ու գործառնական նշանակությանը, կառուցապատման (ծավալատարածական) չափորոշիչներին, Հայաստանի Հանրապետության օրենսդրության ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան՝ կառուցապատողին սեփականության կամ օգտագործման (անշարժ գույքը փոփոխելու իրավասությամբ օժտված) իրավունքով պատկանող հողամասում:

7. Համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի բացակայության դեպքերում կառուցապատման ընթացակարգն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի «Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» N479 (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի N479 որոշում) որոշմամբ սահմանված կարգով:

8. Քաղաքաշինական փաստաթղթերի մշակումը, փորձաքննությունը, շինարարության իրականացումը, շինարարության որակի տեխնիկական հսկողությունը, ինժեներական հետազննումը և շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննությունը կարող են կատարել միայն համապատասխան գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձինք՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրանց կիրարկումն ապահովող Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N774-Ն, 2011 թվականի ապրիլի 7-ի «Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի N778-Ն ու N779-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N510-Ն, 2009 թվականի հուլիսի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N777-Ն (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 2-ի N777-Ն որոշում), 2009 թվականի հուլիսի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N775-Ն (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 2-ի N775-Ն որոշում) որոշումներով սահմանված կարգով:

9. Համայնքի վարչական սահմաններում կառուցապատման թույլտվությունները տալիս է համայնքի ղեկավարը (այսուհետ՝ իրավասու մարմին), բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 29-ի «Հատուկ նշանակության հողերում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» N378-Ն որոշմամբ հաստատված կարգով նախատեսված դեպքերի:

10. Ճարտարապետաշինարարական նախագծերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին՝ կախված շինարարական օբյեկտի ռիսկայնության աստիճանից (կատեգորիայից), ապահովվում է աշխատանքը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագրով կամ քաղաքաշինական փորձաքննություն իրականացնող կազմակերպության փորձագիտական եզրակացությամբ՝ սույն կարգով և սույն որոշմամբ հաստատված N2 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան:

11. Սույն կարգով նախատեսված բոլոր թույլտվությունները, եզրակացությունները (ներառյալ՝ փորձագիտական), ակտերն ու այլ փաստաթղթերը վավերացվում են դրանք տրամադրող համապատասխան անձանց ստորագրությամբ և կնիքով (կամ էլեկտրոնային ստորագրությամբ): Ընդ որում, Համայնքի ղեկավարի համաձայնեցմանը ներկայացվող նախագծային փաստաթղթերի բոլոր թերթերը ստորագրվում և կնքվում են նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի, լիցենզավորված ճարտարապետի (նախագծի

համապատասխան բաժինները՝ ճարտարագետների), իսկ հաստատված նախագծային փաստաթղթերի օրինակները՝ նաև կառուցապատողի կողմից:

12. Նախագծին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին շինարարական աշխատանքների համապատասխանությունն ապահովվում է շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառուի (ենթակապալառուի) և տեխնիկական հսկողություն (օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ նաև հեղինակային հսկողություն) իրականացնող կազմակերպության (կազմակերպությունների), կամ N4 հավելվածով սահմանված միջին ռիսկայնության աստիճանի դասակարգում ունեցող (II կատեգորիայի) պարզ և փոքրածավալ օբյեկտների համար՝ միայն շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառուի կողմից:

13. Ավարտված շինարարական օբյեկտի, ինչպես նաև ինժեներական ենթակառուցվածքի ցանցերին օբյեկտի միացումները և ինժեներական համակարգերի փորձարկումների արդյունքների համապատասխանությունը հաստատված նախագծին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին և ստանդարտներին երաշխավորվում է ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողովի ակտով և փաստագրվում շահագործման թույլտվությամբ (ավարտված շինարարության փաստագրման ակտով):

14. Քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական պետական տեսչության կողմից՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների միջոցով՝ օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող շափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» N55-Ն որոշմամբ սահմանված կարգով:

15. Համայնքի ղեկավարի կողմից կառուցապատման թույլտվություններ ստանալու նպատակով ներկայացված հայտի (դիմումի) մերժումը և օրենքով սահմանված դեպքերում՝ համապատասխան լիազորված մարմնի բացասական մասնագիտական եզրակացությունը պետք է հիմնավորված լինեն համապատասխան իրավական ակտերին հղումով:

16. Կառուցապատման թույլտվությունների տրամադրման համար սույն կարգով նախատեսված ժամկետներում Համայնքի ղեկավարը պատշաճ ձևով ծանուցում է կառուցապատողին համապատասխան թույլտվության (նախագծման կամ շինարարության կամ շահագործման թույլտվություններ) պատրաստ լինելու մասին, ընդ որում՝ համապատասխան թույլտվության տրամադրման ժամկետ է համարվում կառուցապատողին ծանուցելու ժամկետը:

17. Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվությունը սահմանվում է օրենքով:

18. Կառուցապատման թույլտվությունների տրամադրման ժամանակ ծագող վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

19. Կառուցապատողը՝ նախքան շինարարություն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման կամ քանդման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ: Փոխհատուցման ձևերի և չափի հետ կապված անհամաձայնության դեպքում վեճը լուծվում է դատական կարգով:

20. Կառուցապատման թույլտվությունների փոփոխությունները կատարվում են դրանց տրամադրման համար սույն կարգով նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

21. Կառուցապատվող հողամասի գործառնական և (կամ) նպատակային նշանակության փոփոխությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի

մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1920-Ն կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1918-Ն (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշում) և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի N479 որոշումներով սահմանված կարգով՝ կախված տվյալ համայնքի գլխավոր հատակագծի առկայության կամ բացակայության հանգամանքից:

IV. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

22. Արարատի մարզի Սիսավան համայնքում շինարարության օբյեկտները, ելնելով դրանց ծավալից, նշանակությունից, կարևորությունից ու բարդությունից, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի անվտանգությունից, ըստ ռիսկայնության աստիճանի դասակարգվում են հետևյալ հինգ կատեգորիաների՝

- 1) ցածր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ I (առաջին) կատեգորիա,
- 2) միջին ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ II (երկրորդ) կատեգորիա,
- 3) միջինից բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ III (երրորդ) կատեգորիա,
- 4) բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ IV (չորրորդ) կատեգորիա,
- 5) բարձրագույն ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ V (հինգերորդ) կատեգորիա:

23. Սույն կարգի 25-րդ կետի՝

- 1) 1-ին ենթակետով սահմանված՝ ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ փոքրածավալ շինարարական աշխատանքները, որոնք կարող են իրականացվել կառուցապատողի կողմից՝ առանց շինարարության թույլտվության.
- 2) 2-րդ ենթակետով սահմանված՝ միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում այն շինարարական օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը փոխարինվում է նախագծող կազմակերպության երաշխավորագրով, իսկ շինարարության որակի տեխնիկական հսկողությունը՝ շինարարական կազմակերպության երաշխավորագրով.
- 3) 3-րդ ենթակետով սահմանված՝ միջինից բարձր ռիսկայնության աստիճանի (III կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում II և IV կատեգորիայի ռիսկայնության օբյեկտների միջակայքում բնութագրող ցուցանիշներ ունեցող օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերն ենթակա են պարզ փորձաքննության.
- 4) 4-րդ ենթակետով սահմանված՝ բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում հատուկ և կարևորագույն նշանակություն ունեցող շինարարական օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերն ենթակա են համալիր փորձաքննության՝ ներառյալ օրենքով սահմանված պետական լիազորված մարմինների փորձաքննությունները կամ մասնագիտական եզրակացությունները.
- 5) 5-րդ ենթակետով սահմանված՝ բարձրագույն ռիսկայնության (V կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում հատկապես վտանգավոր և (կամ) տեխնիկապես բարդ, ինչպես նաև երկու և ավելի պետությունների շահերին առնչվող քաղաքաշինական օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերը ենթակա են հատուկ համալիր փորձաքննության և որոնց կառուցապատման թույլտվությունների տրամադրման պայմանները՝ յուրաքանչյուր առանձին դեպքի համար սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

24. Ըստ ռիսկայնության աստիճանի (կատեգորիաների) դասակարգված օբյեկտների ցանկերը սահմանված են N4 հավելվածով:

V. ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ԿԱՄ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

25. Նախագծման թույլտվությունը կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքը (այսուհետ՝ առաջադրանք)՝ սահմանում է քաղաքաշինական գործունեության տվյալ օբյեկտին (այդ թվում՝ ոչ հիմնական) ներկայացվող նախագծման պարտադիր պայմաններն ու սահմանափակումները՝ հիմք ընդունելով համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի պահանջները:

26. Առաջադրանքը (N5 հավելվածի N1-2 ձև) ներառում է տվյալ կառուցապատմանն առնչվող՝

- 1) քաղաքաշինական, պատմամշակութային ժառանգության, բնապահպանական, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային, հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության և այլ նորմատիվ պահանջներն ու սահմանափակումները.
- 2) նախագծային փաստաթղթերի մշակման փուլերը՝ համաձայն սույն կարգի 78-ից 89-րդ կետերով սահմանված դրույթների.
- 3) անհրաժեշտ ելակետային տվյալներն ու օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների (ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում և այլն) նախագծման տեխնիկական պայմանները (այսուհետ՝ տեխնիկական պայմաններ).
- 4) առաջադրանքի գործողության ժամկետը:

27. Առաջադրանքի գործողության ժամկետը չի կարող գերազանցել՝

- 1) միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) օբյեկտների համար՝ մեկ տարին.
- 2) միջինից բարձր ռիսկայնության աստիճանի (III կատեգորիայի) օբյեկտների համար՝ մեկուկես տարին.
- 3) բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) օբյեկտների համար՝ երկու տարին:

28. Բարձրագույն ռիսկայնության աստիճանի (V կատեգորիայի) օբյեկտների համար առաջադրանքի գործողության ժամկետը յուրաքանչյուր առանձին դեպքում սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ սույն կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետին համապատասխան:

29. Առաջադրանքով սահմանված պայմանները հիմք են հանդիսանում նախագծային փաստաթղթերի մշակման համար և պարտադիր են քաղաքաշինական գործունեության բոլոր մասնակիցների համար:

30. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման դեպքում առաջադրանքով սահմանված պայմանները պահպանվում են լրիվ ծավալով:

31. Առաջադրանքի գործողության ժամկետը լրանալու դեպքում առաջադրանքի գործողությունը համարվում է դադարեցված, ընդ որում՝ կատարված ծախսերի ռիսկը կրում է կառուցապատողը:

32. Առաջադրանքը և դրա անբաժանելի մասը հանդիսացող տեխնիկական պայմաններն ու ելակետային նյութերը կառուցապատողին տրամադրվում են անվճար:

33. Առաջադրանք չի պահանջվում՝

- 1) բազմակի օգտագործման օրինակելի և «սերտիֆիկացված» նախագծերով կառուցապատում իրականացնելիս.
- 2) N4 հավելվածի N1 ցանկով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներ կատարելիս, այդ թվում՝ բազմաբնակարան շենքերում բնակարանը (կամ գրասենյակը)՝ որպես գրասենյակ (կամ բնակարան) օգտագործելու նպատակով գործառնական նշանակությունը փոփոխելիս.
- 3) կառուցապատվող հողամասը սահմանված կարգով հաստատված գոտիավորման նախագծում ընդգրկված լինելու դեպքում՝ միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) օբյեկտների համար.
- 4) կառույցի արտաքին տեսքը, հարաչափերն ու գործառնական նշանակությունը չփոփոխող՝

- ա. միջին և միջինից բարձր դիսկայնության աստիճանի (II և III կատեգորիաների) օբյեկտների կամ դրանց առանձին հատվածների ներքին վերակառուցումների համար,
- բ. բարձր դիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) բազմաբնակարան բնակելի շենքերում առանձին բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի ներքին վերակառուցման և կապիտալ նորոգման աշխատանքների համար, եթե դրանք չեն հանգեցնում շենքի սեյսմակայունությունն ու հուսալիությունն ապահովող կոնստրուկցիաների փոփոխությանը, չեն վատթարացնում շինարարության օբյեկտների կոնստրուկտիվ և անվտանգության այլ բնութագրերը (ցուցանիշները) և չեն հանգեցնում բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տարածքների փոփոխությանը.
- 5) պատուհանի (կամ դռան) բացվածքը՝ դռան (կամ պատուհանի) վերափոխելու (բացառությամբ պատմամշակութային հուշարձանների) դեպքում, եթե այն չի հանգեցնում շենքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում լրացուցիչ միջամտությունների իրականացմանը:

34. Սույն կարգի 36-րդ կետով սահմանված դեպքերում կառուցապատողը, իր հայեցողությամբ, կարող է դիմել իրավասու մարմնին՝ մինչև նախագծային աշխատանքներ սկսելը տեխնիկական պայմաններ և ելակետային տվյալներ ստանալու նպատակով:

35. Սույն կարգի 37-րդ կետով չնախատեսված դեպքերում տեխնիկական պայմաններն ու ելակետային տվյալները կառուցապատողին են տրամադրվում շինարարության թույլտվության հետ միասին՝ սույն կարգի 98-րդ կետով սահմանված կարգով:

36. Քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը հրապարակային սակարկությունների միջոցով օտարելու, կառուցապատման իրավունքով կամ վարձակալության տրամադրելու դեպքում կառուցապատվող հողամասի ճարտարապետահատակագծային սահմանափակումները ներառող առաջադրանքի նախագիծն ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված համապատասխան ընթացակարգերի համար նախատեսված փաստաթղթերի կազմում՝

- 1) աճուրդային կարգով հողամասերն օտարելու դեպքում՝ աճուրդի կազմակերպման փաստաթղթերի փաթեթում.
- 2) մրցույթով վարձակալության տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում:

37. Սույն կարգի 39-րդ կետով նախատեսված դեպքերում առաջադրանքը կցվում է հրապարակային սակարկությունների արդյունքներով աճուրդում կամ մրցույթում հաղթած անձի հետ օրենքով սահմանված կարգով և ժամկետում կնքվող պայմանագրին:

38. Առանց մրցույթի անհատույց (մշտական) օգտագործման, ուղղակի վաճառքի միջոցով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված այլ դեպքերում՝ առաջադրանքը կցվում է հողամասը կառուցապատման նպատակով տրամադրելու մասին որոշմանը:

39. Սույն կարգի 40-րդ և 41-րդ կետերով նշված դեպքերում՝ առաջադրանքի ձևավորման փուլում մատակարար կազմակերպությունների կողմից տեխնիկական պայմանները տրամադրվում են իրավասու մարմնին՝ սույն կարգի 48-րդ կետով նշված ժամկետներում.

40. Եթե անհրաժեշտություն է առաջանում փոփոխել կառուցապատվող հողամասի գործառնական կամ նպատակային նշանակությունը, ապա առաջադրանքի նախագիծն ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան ընթացակարգերի համար նախատեսված փաստաթղթերի փաթեթում: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխվում է տարածական պլանավորման փաստաթղթերի բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, որի պարագայում առաջադրանքը տրամադրվում է հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո՝ սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

41. Կառուցապատողը՝ քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով առաջադրանք ստանալու համար իրավասու մարմին է ներկայացնում հայտ (N5 հավելվածի N1-1 ձև), որում նշվում են նախագծվող նոր օբյեկտի կամ փոփոխման (վերակառուցման, վերականգնման, ուժեղացման կամ գործառնական նշանակության փոփոխության) ենթակա օբյեկտի կամ դրա մի հատվածի հասցեն, նշանակությունը, նախատեսվող մակերեսը, կառույցի բարձրությունը, կառույցի գործառնական նշանակության փոփոխման դեպքում՝ փոփոխման նպատակը և սույն կետով նշված ձևաթղթով սահմանված այլ տեղեկություններ:

42. Հայտին կցվում են՝

- 1) կառուցապատվող հողամասի հատակագիծը՝ նախագծվող կամ փոփոխման ենթակա օբյեկտի առաջարկվող տեղանշմամբ, իսկ կառույցի գործառնական նշանակության փոփոխության դեպքում՝ նաև վերջինիս հատակագիծը (հատակագծերը)։
- 2) անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ օգտագործողի՝ անշարժ գույքը փոփոխելու իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը:

43. Կառույցների գործառնական նշանակության փոփոխություններն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» N88 որոշմամբ սահմանված կարգով:

44. Հայտի ընդունման օրվանից 3-օրյա ժամկետում իրավասու մարմինը հարցում է ներկայացնում մատակարար կազմակերպություններին (եթե նախատեսվող նոր օբյեկտի կառուցման կամ վերակառուցման կամ գործառնական նշանակության փոփոխության հետևանքով առաջանում է օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքի նոր ծառայությունների մատուցում կամ ծառայությունների մատուցման փոփոխություն)՝ ինժեներական ենթակառուցվածքի ցանցերին միանալու տեխնիկական պայմանները ստանալու նպատակով, հարցմանը կցելով հայտով ներկայացված փաստաթղթերը:

45. Մատակարար կազմակերպությունները տեխնիկական պայմաններն իրավասու մարմինն են տրամադրվում վերջինիս հարցումը ստանալու օրվանից 5-օրյա ժամկետում՝ II կատեգորիայի, 10-օրյա ժամկետում՝ III կատեգորիայի և 15-օրյա ժամկետում՝ IV կատեգորիայի օբյեկտների համար:

46. Առաջադրանքը (N5 հավելվածի N1-2 ձև) կառուցապատողին է տրամադրվում հայտի ընդունման օրվանից 10-օրյա ժամկետում՝ II կատեգորիայի օբյեկտների համար, 15-օրյա ժամկետում՝ III կատեգորիայի օբյեկտների համար, 20-օրյա ժամկետում՝ IV կատեգորիայի օբյեկտների համար՝ մատակարար կազմակերպություններից տեխնիկական պայմաններ ստանալու անհրաժեշտության դեպքերում:

47. Եթե նախատեսվող նոր օբյեկտի կառուցման կամ վերակառուցման կամ գործառնական նշանակության փոփոխության հետևանքով չի առաջանում օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքի նոր ծառայությունների մատուցման կամ ծառայությունների մատուցման փոփոխության անհրաժեշտություն, ապա առաջադրանքը տրամադրվում է հայտի ընդունման օրվանից 5-օրյա ժամկետում՝ II կատեգորիայի օբյեկտների համար, 10-օրյա ժամկետում՝ III կատեգորիայի օբյեկտների համար և 15-օրյա ժամկետում՝ IV կատեգորիայի օբյեկտների համար:

48. V-րդ կատեգորիայի օբյեկտների յուրաքանչյուր առանձին դեպքի համար (եթե միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ), կառուցապատման ծրագիրն իրականացնող համապատասխան ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից մշակվում է օբյեկտի նախագծման տեխնիկական բնութագիրը և օրենքով սահմանված դեպքերում ու կարգով ներկայացվում Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը: Իրավասու մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած տեխնիկական բնութագրի հիման վրա, սույն կարգի պահանջներին համապատասխան, կազմում է առաջադրանքը (ներառյալ՝ անհրաժեշտ ելակետային նյութերն ու տեխնիկական պայմանները) ու տրամադրում սույն կետով նշված լիազորված մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից առաջարկված ժամկետներում:

49. Առաջադրանքի անբաժանելի մաս կազմող՝ սույն կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետում նշված ելակետային տվյալներն ու տեխնիկական պայմանները՝ N5 հավելվածի N1-2 ձևում աստղանիշով (*) նշված դրույթների մասով տրամադրվում են նաև վերջիններիս գրաֆիկական արտացոլումն ամրագրող ամփոփ սխեմայով:

50. Կառուցապատվող հողամասի սահմաններում առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման անհրաժեշտության դեպքում N5 հավելվածի N1-2 ձևում «Լրացուցիչ պայմաններ» բաժնի 25-րդ կետում կատարվում է համապատասխան գրառում: Կառուցապատողն առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման պայմանների վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերում տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ՝ մինչև նախագծային աշխատանքներն սկսելը:

51. Էլեկտրոնային հաղորդակցության (ներառյալ ամրակցված հեռախոսացանցը) ենթակառուցվածքների ելակետային տվյալների մասով ամփոփ սխեմայում նշվում են N5 հավելվածի N1-2 ձևի՝

- 1) «Նախագծվող հողամասի բնութագիրը» բաժնի 5-րդ կետով սահմանված՝ գոյություն ունեցող էլեկտրոնային հաղորդակցության ստորգետնյա համակարգերի մասին տեղեկատվությունը՝ դրանց կառուցման համար տրված շինարարության թույլտվությանը համապատասխան.
- 2) «Նախագծային պահանջներ» բաժնի 12.4-րդ կետով սահմանված էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը)՝ մինչև կառուցապատվող հողամասի սահմանագիծը հատվածի տեղադիրքը, որը պետք է ապահովի՝

- ա. հանրային էլեկտրոնային հաղորդակցության տարբեր օպերատորների կողմից դրա համատեղ օգտագործման հնարավորությունը՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան,
- բ. կառուցապատողի կողմից շինարարական աշխատանքների կատարման նվազագույն ծավալը,
- գ. գոյություն ունեցող ստորգետնյա մալուխատարների (առկայության դեպքում) օգտագործման հնարավորությունը,
- դ. համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով (առկայության դեպքում) ինժեներական ցանցերի, սարքավորումների, ինչպես նաև ստորգետնյա տարածքների օգտագործման գոտիների համար ընդունված լուծումներին համապատասխանությունը:

52. Այն դեպքերում, երբ կառուցապատվող հողամասի ինժեներական հետազննումները (ճարտարագիտական ուսումնասիրությունները) անհնարին են առանց քանդման աշխատանքների իրականացման, հայտին կցվում է նաև քանդման (կամ ապամոնտաժման) թույլտվություն ստանալու դիմումը՝ սույն կարգի 96-ից 98-րդ կետերով սահմանված պահանջների ապահովմամբ: Քանդման թույլտվությունը տրվում է առաջադրանքի հետ միաժամանակ, ընդ որում՝ օբյեկտի փաստացի քանդումն իրականացվում է նշված թույլտվությամբ սահմանված հաջորդականությամբ և կարգով՝ օրենքով սահմանված տեղական տուրքը կառուցապատողի կողմից վճարվելուց հետո:

53. Պետական ցուցակներում ներառված պատմության և մշակույթի հուշարձան (այսուհետ՝ պատմամշակութային հուշարձան) հանդիսացող կառույցների նկատմամբ կամ պատմամշակութային հուշարձանի պահպանական գոտում քաղաքաշինական գործունեություն նախատեսող դեպքերում իրավասու մարմինը հայտը ստանալու օրվանից 3-օրյա ժամկետում հարցում է ներկայացնում մշակույթի, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության ու օգտագործման բնագավառներում կառավարումն իրականացնող լիազորված մարմին (այսուհետ՝ պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմին)՝ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով:

54. Պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմնի մասնագիտական եզրակացությունը իրավասու մարմինն է տրամադրվում հայտը ստանալու օրվանից՝

- 1) պատմամշակութային հուշարձանի պահպանական գոտում նախատեսվող օբյեկտների վերաբերյալ՝ սույն կարգի 48-րդ կետով նախատեսված ժամկետներում՝ կախված համաձայնեցման ներկայացված օբյեկտի ռիսկայնության աստիճանից.

- 2) պատմամշակութային հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման նախագծերի առաջադրանքների վերաբերյալ (եթե նշված աշխատանքների պատվիրատուն պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմինը չէ)՝ 15-օրյա ժամկետում:
- 3) պատմամշակութային հուշարձանի փոփոխում կամ տեղափոխում նախատեսող դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ժամկետում:

55. Պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազոր մարմնի բացասական մասնագիտական եզրակացության դեպքում առաջադրանքը մերժվում է:

56. Եթե պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմինը հանդես է գալիս որպես հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման աշխատանքների պատվիրատու, ապա նրա կողմից կազմված և իրավասու մարմինն տրամադրված նախագծման տեխնիկական բնութագրի հիման վրա իրավասու մարմինը սույն կարգով IV կատեգորիայի օբյեկտների համար նախատեսված կարգով և ժամկետներում մատակարար կազմակերպություններից ստանում է տեխնիկական պայմանները (անհրաժեշտության դեպքում), կազմում առաջադրանքն ու տրամադրում սույն կետով նշված լիազորված մարմին:

57. Հոգևոր նշանակության նոր կառույցի կամ պատմամշակութային հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման առաջադրանքը իրավասու մարմինը սույն կարգի 56-րդ կետով նշված ժամկետում ներկայացնում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու համաձայնեցմանը, որի եզրակացությունը տրվում է սույն կարգի 57-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետներում:

58. Հայտը կարող է մերժվել, եթե՝

- 1) հայտում ամրագրված են այնպիսի ցուցանիշներ (պայմաններ), որոնք հակասում են տվյալ տարածքի տարածական պլանավորման փաստաթղթերի կամ քաղաքաշինական, բնապահպանական, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային և այլ նորմատիվ փաստաթղթերի պահանջներին:
- 2) ներկայացվող փաստաթղթերի լրակազմը չի համապատասխանում սույն կարգի 44-րդ և 45-րդ կետերով սահմանված պահանջներին կամ դրանք պարունակում են սխալ կամ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ:
- 3) սույն կարգի 55-րդ կետում նշված դեպքերում, եթե մերժվում է քանդման (ապամոնտաժման) թույլտվությունը:
- 4) պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմնի և (կամ) բացասական մասնագիտական եզրակացության դեպքում:
- 5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ առաջադրանքը համաձայնեցնելու իրավասությամբ օժտված պետական կառավարման այլ լիազորված մարմինների բացասական եզրակացության դեպքում:

59. Կառուցապատողը կարող է համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարել մերժված հայտով ներկայացված փաստաթղթերում և կրկին հայտ ներկայացնել իրավասու մարմին:

60. Իրավասու մարմինը քննարկում է կրկնակի հայտը և սույն կարգի 50-րդ կետով նախատեսված ժամկետներում կառուցապատողին տալիս առաջադրանք:

61. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V կատեգորիաների դասակարգում ունեցող օբյեկտների ու քաղաքաշինական համալիրների առաջադրանքները կարող են լրամշակվել իրավասու մարմնի կողմից միջանկյալ համաձայնեցում ստացած՝ սույն կարգի 84-րդ կետով սահմանված կարգով մշակված էսքիզային նախագծի հիման վրա, եթե նման պայման ամրագրված է առաջադրանքում:

**ԳԼՈՒԽ VI. ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ, ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ.
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ (ՔԱՆԴՄԱՆ) ԹՈՒՅԼՏՆՎՈՒԹՅՈՒՆ**

62. Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների (այդ թվում՝ ոչ հիմնական) կառուցման, դրանց վերակառուցման (ներառյալ՝ քանդման կամ ապամոնտաժման), վերականգնման և ուժեղացման նախագծերը, քաղաքաշինական համալիրների և գործառնական տարածքների հատակագծման նախագծերը, ինչպես նաև բարեկարգման (և կանաչապատման) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը (այսուհետ՝ նախագծային փաստաթղթեր) մշակվում են հաստատված տարածական պլանավորման փաստաթղթերին համապատասխան՝ առաջադրանքով (նախագծման թույլտվությամբ) սահմանված պահանջների ապահովմամբ:

63. Կառուցապատման նախագծերը և գործառնական տարածքների հատակագծման նախագծերը մշակվում են նոր կամ վերակառուցվող բնակելի, հասարակական, արտադրական շենքերի խմբերի, ռեկրեացիոն-առողջարանային, մարզական և այլ նշանակության քաղաքաշինական համալիրների (այսուհետ՝ քաղաքաշինական համալիր) համար:

64. Գործառնական տարածքների հատակագծման նախագծերը մշակվում են կառուցապատման նախագծերի կազմում կամ, ըստ անհրաժեշտության, որպես կառուցապատման հաջորդ փուլերում նախագծային փաստաթղթերի մշակման համար հիմք հանդիսացող ինքնուրույն փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության 1999 թվականի մարտի 13-ի «Գործառնական տարածքների գլխավոր հատակագծերի նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին» N 150 որոշմամբ սահմանված կարգով:

65. Բարեկարգման և կանաչապատման նախագծերը մշակվում են ինչպե՛ս նախագծային փաստաթղթերի կազմում՝ որպես դրանց անբաժանելի մաս, այնպե՛ս էլ որպես ինքնուրույն փաստաթուղթ՝ ընդհանուր օգտագործման տարածքների (գրոսայգիներ, հրապարակներ, փողոցներ, ճանապարհներ, լողափեր և այլն), բնության հատուկ պահպանվող տարածքների, պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիների և այլ տարածքների լանդշաֆտային կազմակերպման նպատակով:

66. Նախագծային փաստաթղթերի մշակման նպատակով կառուցապատողը նախագծային փաստաթղթեր մշակող կապալառուի հետ (այսուհետ՝ նախագծող) կնքում է պայմանագիր: Օրենքով սահմանված դեպքերում կամ կառուցապատողի հայեցողությամբ նախագծողի ընտրությունը կարող է կատարվել ճարտարապետական հրապարակային մրցույթների անցկացման միջոցով:

67. Պայմանագրին կցվում են՝

- 1) սահմանված կարգով տրված առաջադրանքը (բացառությամբ առաջադրանք չպահանջող սույն կարգի 36-րդ կետով սահմանված դեպքերի).
- 2) կառուցապատողի կողմից կազմված տեխնիկական բնութագիրը (նախագծային առաջադրանքը) (N5 հավելվածի N 4-2 և N4-3 ձևեր), ընդ որում կառուցապատողի տեխնիկական բնութագիրն ու նախագծման թույլտվությունը չեն կարող պարունակել միմյանց հակասող դրույթներ.
- 3) վերակառուցվող, ուժեղացվող, վերականգնվող օբյեկտների դեպքում նաև՝ դրանց տեխնիկական վիճակի մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի հոկտեմբերի 30-ի «Բնակելի և հասարակական շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրման ու անձնագրավորման մասին» N 346 որոշմամբ սահմանված կարգով կազմված եզրակացությունը,
- 4) ինժեներաերկրաբանական հետազննությունների նյութերը, տարածքի տեղագրագեոդեզիական և կադաստրային հանույթները.
- 5) բազմակի օգտագործման օրինակելի նախագծով կամ «սերտիֆիկացված» նախագծով կառուցապատումն իրականացնելու դեպքում նաև՝ տեղակապվող օրինակելի նախագծը:

68. Սույն կարգի 70-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված նյութերի առկայությունը պարտադիր է շինարարության թույլտվություն պահանջող բոլոր օբյեկտների համար՝ անկախ դրանց ռիսկայնության աստիճանից:

69. Ինժեներաերկրաբանական հետազննությունների նյութերի փորձաքննությունն իրականացվում է N2 հավելվածով և Հայաստանի Հանրապետության 2003 թվականի սեպտեմբերի 4-ի «Ինժեներաերկրաբանական հետազննությունների նյութերի փորձաքննության կարգը հաստատելու և

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N96 որոշման մեջ լրացում կատարելու մասին» N1530-Ն որոշմամբ սահմանված կարգով:

70. Բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի ներդրումն ու կիրառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության 2012 թվականի հունիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության համայնքներում (քնակավայրերում) բնակելի կառուցապատման օբյեկտների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգների ներդրման ու կիրառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N1136-Ն ու 2010 թվականի ապրիլի 15-ի N440-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N814-Ն որոշմամբ սահմանված պահանջների ապահովմամբ:

71. Նախագծային փաստաթղթերի (այդ թվում՝ ըստ սույն կարգի 78-րդ կետով նշված նախագծման փուլերի) կազմին և բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջները սահմանվում են քաղաքաշինության բնագավառի պետական լիազորված մարմնի գերատեսչական ակտով: Նախագծային աշխատանքների կապալի պայմանագրով ամրագրված պայմաններին համապատասխան՝ նախագծային փաստաթղթերի կազմում կարող են մշակվել լրացուցիչ նյութեր, որոնց բովանդակությունը և մասշտաբը նշվում են կառուցապատողի կողմից կազմված տեխնիկական բնութագրում:

72. Նախագծողը կարող է պայմանագրով ամրագրված պայմանների համաձայն հավաքել սույն կարգի 70-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով նշված և կառուցապատողի տեխնիկական բնութագրում նշված լրացուցիչ պայմանների (առկայության դեպքում) կատարման համար անհրաժեշտ ելակետային նյութերը կամ դրանց մի մասը:

73. Պետական կամ համայնքի բյուջեի (այդ թվում՝ վարկային և դրամաշնորհային) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ իրականացվող օբյեկտների նախագծման դեպքում՝

- 1) նախագծող կազմակերպությունն ընտրվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,
- 2) նախագծի կազմում պարտադիր մշակվում են օբյեկտի նախահաշվային փաստաթղթերը:

74. Սույն կարգի 76-րդ կետով չնախատեսված դեպքերում նախահաշվային փաստաթղթերը մշակվում են կառուցապատողի հայեցողությամբ:

75. Նախագծային փաստաթղթերը, կախված նախագծվող օբյեկտի դիսկալնության աստիճանից (կատեգորիայից), կարող են մշակվել մեկ՝ «Աշխատանքային նախագիծ» կամ երկու՝ «Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր» փուլերով:

76. Որպես կանոն, մեկ փուլով մշակվում են II և III դիսկալնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների, բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և «սերտիֆիկացված» նախագծերի տեղակապման նախագծերը, իսկ երկու փուլով՝ IV և V կատեգորիաների օբյեկտների նախագծային փաստաթղթերը:

77. Նախագծային փաստաթղթերի մշակման փուլերը սահմանվում են առաջադրանքով և նախագծային կապալի պայմանագրով: Նախագծային լուծումները պետք է ապահովեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջները:

78. Նախագծային փաստաթղթերի 2 փուլով մշակման դեպքում հաստատվող փուլ է համարվում «Նախագիծ» փուլը, որի հիման վրա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է տրվել շինարարության թույլտվություն՝ աշխատանքների իրականացման հաջորդականության (նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքներ և այլն) վերաբերյալ համապատասխան նշումով:

79. Հաջորդական՝ «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը մշակվում է հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա և դրանով ընդունված լուծումներին համապատասխան:

80. Կառուցապատման նախագծի «Աշխատանքային նախագիծ» (մեկ փուլով մշակման դեպքում) կամ «Աշխատանքային փաստաթղթեր» (երկու փուլով մշակման դեպքում) նախագծային փաստաթղթերում ներառվում են առաջադրանքով նախատեսված օբյեկտների աշխատանքային փաստաթղթերը:

81. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում, պատմամշակութային հուշարձանների և դրանց պահպանական գոտիների տարածքներում, կառուցապատվող հողամասն ընդգրկող տարածքի համար սահմանված կարգով հաստատված գոտիավորման նախագծի բացակայության դեպքում, ինչպես նաև N4 հավելվածի N3 ցանկով սահմանված հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտներ ու քաղաքաշինական համալիրներ նախագծելիս՝ առաջադրանքով կարող է նախատեսվել նաև նախագծի միջանկյալ՝ «Էսքիզային նախագիծ» կամ «Կառուցապատման սխեմա» փուլի մշակման պայման՝ օբյեկտի ծավալատարածական և ճարտարապետահատակագծային լուծումներն իրավասու մարմնի կամ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շահագրգիռ մարմինների հետ նախնական համաձայնեցման համար:

82. «Էսքիզային նախագիծը» կամ «Կառուցապատման սխեման» հիմք չեն շինարարության թույլտվություն տրամադրելու համար:

83. Սույն կարգի 84-րդ կետով սահմանված դեպքերում «Կառուցապատման սխեմայի» համաձայնեցման ընթացակարգն իրականացվում է՝

- 1) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սույն կարգի 14-ից 16-րդ կետերով նշված համապատասխան որոշումներով սահմանված կարգով.
- 2) հաստատված տարածական պլանավորման փաստաթղթերի բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի N479 որոշմամբ սահմանված կարգով:

84. Համայնքի ղեկավարը կառուցապատողի ներկայացրած էսքիզային նախագիծը քննարկում է սույն կարգի 56-րդ և 57-րդ կետերով սահմանված կարգով և ժամկետներում նախագծման թույլտվության (առաջադրանքի) վերաբերյալ մասնագիտական եզրակացություն տրամադրած կամ այն համաձայնեցրած շահագրգիռ մարմինների հետ և կառուցապատողին ծանուցում է միջանկյալ համաձայնություն տալու մասին: Միջանկյալ համաձայնեցմանը կցվում են իրավասու և շահագրգիռ մարմինների առաջարկություններն ու դիտողությունները (առկայության դեպքում), որոնք պետք է հաշվի առնվեն նախագծման հաջորդ փուլերում:

85. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V կատեգորիաների դասակարգում ունեցող օբյեկտների ու համալիրների առաջադրանքները կարող են լրամշակվել միջանկյալ համաձայնեցում ստացած՝ սահմանված կարգով մշակված էսքիզային նախագծի հիման վրա, եթե նման պայման ամրագրված է առաջադրանքում:

86. Էսքիզային նախագծի մշակումը և(կամ) առաջադրանքի լրամշակումը հիմք չէ առաջադրանքի գործողության ժամկետը երկարաձգելու համար:

87. Կառուցապատողը նախագծային աշխատանքների ավարտից հետո նախագծային փաստաթղթերը ներկայացնում է համապատասխան լիցենզիա ունեցող անձին՝ փորձաքննության (բացառությամբ՝ սույն կարգի 92-րդ կետով նշված փորձաքննություն չպահանջող դեպքերի):

88. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությունն իրականացվում է N2 հավելվածով սահմանված կարգով:

89. Փորձաքննություն չի պահանջվում՝

- 1) I կատեգորիայի ռիսկայնության շինարարական աշխատանքներ կատարելու համար,
- 2) II կատեգորիայի ռիսկայնության օբյեկտների նախագծային փաստաթղթերի համար.

- 3) բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և օրենսդրությամբ սահմանված կարգով «սերտիֆիկացված» նախագծերի զերոյական նիշից բարձր նախագծային փաստաթղթերի համար.

90. II կատեգորիայի ռիսկայնության օբյեկտների նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին ապահովվում է նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագրով:

91. Բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կամ «սերտիֆիկացված» նախագծերի տեղակայման (զերոյական նիշից ցածր) նախագծային փաստաթղթերը մշակվում են տեղակապվող օբյեկտի ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) համար սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

92. Կառուցապատողը, նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և միաժամանակ շինարարության թույլտվության ստացման նպատակով դիմում է (N2 հավելվածի N2-1ձև) իրավասու մարմին, կցելով նախագծային փաստաթղթերը, փորձաքննության դրական եզրակացությունը (եզրակացությունները) կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նախագծային աշխատանքների կապալառուի գրավոր երաշխավորագիրը, ինչպես նաև սույն կետով նշված ձևաթղթով սահմանված այլ տեղեկություններ:

93. Համաձայնեցման ներկայացվող նախագծային փաստաթղթերի կազմում ներառվում են կառուցապատվող հողամասից դուրս՝ ինժեներական ենթակառուցվածքի ընդհանուր ցանցերին միացող գծերի կառուցման հետևանքների (առկայության դեպքում) վերացմանն ուղղված նախագծային լուծումները:

94. Համայնքի ղեկավարը համաձայնեցնում է նախագծային փաստաթղթերը և միաժամանակ տալիս է շինարարության թույլտվությունը (եթե կառուցապատողը սույն կարգի 37-րդ կամ 52-րդ կետերին համապատասխան ստացել է ելակետային տվյալներն ու տեխնիկական պայմանները)՝ դրա մասին ծանուցելով կառուցապատողին սույն կարգի 95-րդ կետով նշված դիմումը ստանալու օրվանից՝

- 1) II ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների համար՝
 - ա. 3-օրյա ժամկետում՝ բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կամ «սերտիֆիկացված» նախագծերի տեղակայման դեպքում,
 - բ. 5-օրյա ժամկետում՝ սույն կետի «ա» ենթակետով չնշված այլ օբյեկտների դեպքում.
- 2) 10-օրյա ժամկետում՝ III ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների դեպքում.
- 3) 15-օրյա ժամկետում՝ IV ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների դեպքում:

95. Սույն կարգի 36-րդ կետով նախագծման թույլտվություն (առաջադրանք) չպահանջող դեպքերում, եթե առաջանում է օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքի նոր ծառայությունների մատուցում կամ ծառայությունների մատուցման փոփոխություն, ապա կառուցապատողի կողմից (N2 հավելվածի N2-1 ձև) համապատասխան նշումով (տեխնիկական պայմանների ստացման մասին) դիմումը ստանալուց հետո իրավասու մարմինը եռօրյա ժամկետում հարցում է ներկայացնում մատակարար կազմակերպություններին և նրանցից ստանում տեխնիկական պայմանները՝ սույն կարգի 48-րդ կետերով սահմանված ժամկետներում և կարգով:

96. Սույն կարգի 98-րդ կետով նախատեսված դեպքերում նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և միաժամանակ շինարարության թույլտվության տրամադրման (ներառյալ՝ ելակետային տվյալներն ու տեխնիկական պայմանները) գործառույթներն իրավասու մարմինն իրականացնում է կառուցապատողի դիմումը ստանալու օրվանից՝

- 1) II ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) օբյեկտների համար՝
 - ա. 7-օրյա ժամկետում՝ բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կամ «սերտիֆիկացված» նախագծերի տեղակայման դեպքում,
 - բ. 10-օրյա ժամկետում՝ սույն կետի «ա» ենթակետով չնշված այլ օբյեկտների դեպքում.
- 2) 15-օրյա ժամկետում՝ III և IV ռիսկայնության աստիճանի (կատեգորիաների) օբյեկտների դեպքում:

97. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» N660 որոշմամբ (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N660 որոշում) նախատեսված դեպքերում և կարգով իրավասու մարմինն ապահովում է կառուցապատվող օբյեկտի վերաբերյալ հասարակության իրազեկումը:

98. Հասարակության իրազեկում պահանջող դեպքերում՝ սույն կարգի 97-րդ և 99-րդ կետերով նշված ժամկետներին գումարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N660 որոշմամբ նախատեսված ժամկետը:

99. Դիտողություններով վերադարձված և դրանց հաշվառմամբ լրամշակված նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում և դրանց հիման վրա տրվում է շինարարության թույլտվություն սույն կարգի 97-րդ կետով սահմանված ժամկետներում:

100. Ոչ հիմնական օբյեկտների համար իրավասու մարմնի կողմից տրվում է տեղադրման թույլտվություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի «Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգը հաստատելու մասին» N896 որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան:

101. Ծանուցումը ստանալուն պես կառուցապատողը հաստատում է համաձայնությունը ստացած նախագծային փաստաթղթերի օրինակները, ներկայացնում շինարարության թույլտվության տեղական տուրքը վճարելու մասին անդորրագիրը (անդորրագրերը) և նույն օրը ստանում շինարարության թույլտվությունը:

102. Շինարարության թույլտվությունը կարող է մերժվել, եթե՝

- 1) նախագծային փաստաթղթերը չեն համապատասխանում նախագծման թույլտվությամբ (առաջադրանքին) սահմանված պայմաններին (այդ թվում՝ տեխնիկական) և սահմանափակումներին կամ դրանց կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին.
- 2) սույն կարգի 95-րդ կետով սահմանված փաստաթղթերի լրակազմն ամբողջական չէ կամ պարունակում է ոչ հավաստի տեղեկություններ.
- 3) նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և շինարարության թույլտվության տրամադրման մասին դիմումը ներկայացվել է նախագծման թույլտվության (առաջադրանքի) գործողության ժամկետը լրանալուց հետո.
- 4) նախագծման թույլտվություն (առաջադրանք) չպահանջող դեպքերում՝ հաստատված գոտիավորման նախագծով սահմանված պահանջներին նախագծային փաստաթղթերի անհամապատասխանության հիմքով.
- 5) օրենքով սահմանված տեղական տուրքի վճարման անդորրագիրը չներկայացնելու դեպքում:

103. Հաստատված նախագծային փաստաթղթերում փոփոխություններ կատարվում են սույն կարգով նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

104. Կառուցապատման նախագծի շինարարության թույլտվությունը տրվում է քաղաքաշինական համալիրում ներառված օբյեկտների նախագծային փաստաթղթերի կամ բազմակի օգտագործման կամ «սերտիֆիկացված» նախագծերով կառուցապատու իրականացնելու դեպքում՝ դրանց տեղակապման նախագծերի հիման վրա:

105. Շինարարության թույլտվությունը կարող է մերժվել միմիայն սույն կարգի 95-րդ կետով սահմանված հիմքերով, ընդ որում, կատարված ծախսերի դիսկը կրում է կառուցապատողը:

106. Նոր կառուցվող շենքերի, շինությունների համար շինարարության թույլտվությունը տրվում է 2 տարի ժամկետով, եթե տվյալ օբյեկտի շինարարության համար սահմանված նորմերով այլ ժամկետներ նախատեսված չեն:

107. Գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների համար թույլտվությունը տրվում է նախագծային փաստաթղթերով տվյալ օբյեկտի շինարարության (քանդման) տևողության նորմերով հաշվարկված՝ սակայն ոչ ավելի քան սույն կարգի 109-րդ կետով սահմանված ժամկետը:

108. Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետների հաշվարկի սկիզբ է համարվում շինարարության թույլտվության տրամադրման մասին կառուցապատողին ծանուցելու օրը:

109. Ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը ներառվում է շինարարության տևողության մեջ և չի կարող գերազանցել 15 օրը, բացառությամբ բարձրագույն դիսկալնության աստիճանի (V կատեգորիայի) օբյեկտների, որոնց ժամկետը յուրաքանչյուր առանձին դեպքում սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

110. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման, կառուցման փուլում գտնվող կամ ավարտված, սակայն շահագործման չհանձնված շենքերի ու շինությունների նկատմամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրավունքների պետական գրանցման դեպքում շինարարության (քանդման, ապամոնտաժման, տեղադրման) թույլտվությունը և դրանով սահմանված պայմանները պահպանվում են լրիվ ծավալով:

111. Եթե նոր կառուցվող օբյեկտների շինարարությունը հնարավոր չէ առանց տվյալ կառուցապատվող հողամասում գտնվող շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների) քանդման, ապա նոր կառուցվող օբյեկտների համար տրված շինարարության թույլտվությունը՝ համապատասխան նշումով, նաև քանդման (կամ ապամոնտաժման) թույլտվություն է՝ ընդ որում, քանդումը կամ ապամոնտաժումն իրականացվում է սահմանված կարգով համաձայնեցված նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ և կարգով: Սույն կետով նախատեսված դեպքերում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության՝ օրենքով սահմանված տուրքերը վճարվում են միաժամանակ:

112. Շինարարության (տեղադրման, քանդման, ապամոնտաժման) թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես սույն կարգով համաձայնեցված ու հաստատված նախագծային փաստաթղթերին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

113. Պատմամշակութային հուշարձանի տեղափոխման օրենքով սահմանված բացառիկ դեպքերում, պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմնի դրական եզրակացության հիման վրա և Հայաստանի Հանրապետության կառավարության թույլտվության առկայության դեպքում իրավասու մարմնի կողմից տրվում է հուշարձանի ապամոնտաժման թույլտվություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ սահմանված պահանջների ապահովմամբ:

114. Եթե օբյեկտի քանդումը չի նախատեսում նոր օբյեկտի կառուցում և հաջորդող աշխատանքների իրականացման համար սույն կարգով սահմանված դեպքերում չի պահանջվում շինարարության թույլտվություն, ապա կառուցապատողը (սեփականատերը կամ նրա կողմից սահմանված կարգով լիազորված անձը) քանդման թույլտվություն ստանալու համար իրավասու մարմին է ներկայացնում դիմում համաձայն N5 հավելվածի N2-2 ձևի: Կառուցապատողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով վճարել քանդման թույլտվության տուրքը և քանդումն իրականացնել սահմանված կարգով համաձայնեցված նախագծային փաստաթղթերին համապատասխան:

115. Քանդման (ապամոնտաժման) թույլտվությունն Համայնքի ղեկավարի կողմից տրամադրվում է կամ մերժվում է սույն կարգի 97-րդ կետով սահմանված ժամկետներում:

116. Քանդման (ապամոնտաժման) թույլտվությունների տրամադրման ընթացակարգն իրականացվում է քանդման ենթակա օբյեկտի դիսկայնության աստիճանի (կատեգորիայի) համար սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

117. Եռօրյա ժամկետում շինարարության (քանդման, ապամոնտաժման, տեղադրման) թույլտվության պատճենները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային ծառայության համապատասխան տարածքային տեսչություն: Համայնքի ղեկավարը տրամադրած թույլտվության մասին նույն ժամկետում իրազեկում է նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետներին:

118. Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում իրավասու մարմինը կառուցապատողին գրավոր նախազգուշացնում է շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաքաշինական գործունեության օբյեկտն օտարելու մասին:

119. Կառուցապատողը նախազգուշացումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում պարտավոր է դիմել իրավասու մարմին՝ շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու մասին դիմումով (N5 հավելվածի N2-1 ձև):

120. Համայնքի ղեկավարի կողմից շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան տվյալ օբյեկտի չիրականացված աշխատանքների համար շինարարության տևողության նորմերով հաշվարկված ժամկետի չափով:

121. Կառուցապատողը պարտավոր է շինարարության թույլտվությամբ սահմանված նոր ժամկետում ավարտել կառուցապատումը կամ օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող օբյեկտը:

122. Սույն կարգի 76-րդ կետով չնշված (նախահաշվային փաստաթղթերի բացակայության դեպքում) դեպքերում՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ կառուցապատումը քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելու համար նախատեսված տուգանքի (տուգանքների) չափը հաշվարկվում է «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի բաղկացուցիչ մաս կազմող հավելվածով սահմանված գնահատման կարգով:

123. Եթե կառուցապատողը չի կատարում սույն կարգի 122-րդ կետով սահմանված պահանջը կամ սույն կարգի 124-րդ կետի պահանջներով չի ավարտում կառուցապատումը կամ չի օտարում սեփականության իրավունքով իրեն պատկանող օբյեկտը, ապա շինարարության թույլտվությամբ սահմանված նոր ժամկետը լրանալու օրվանից եռամսյա ժամկետում Համայնքի ղեկավարը դիմում է դատարան՝ օրենքով սահմանված կարգով տվյալ օբյեկտը վաճառելու մասին հայցով:

124. Շինարարության թույլտվության հետ միասին կառուցապատողին է տրվում շինարարության վարման մատյանը՝ դրոշմակնքված իրավասու մարմնի կողմից: Շինարարության վարման մատյանի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը:

125. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ համաձայն N5 հավելվածի N2-5 ձևի տեղեկացնում է Համայնքի ղեկավարին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությանը:

126. Շինարարության (քանդման) թույլտվության տրամադրման օրվանից շինարարության տևողության ժամանակահատվածի կեսը (սակայն ոչ պակաս, քան մեկուկես տարին) լրանալու ժամկետում շինարարական աշխատանքներ չսկսելու դեպքում կառուցապատողը պարտավոր է դիմել Համայնքի ղեկավարին՝ կառուցապատման և տեխնիկական պայմանների հնարավոր փոփոխությունների մասին լրացուցիչ տվյալներ ստանալու, դրանց փոփոխման արդյունքում լրամշակված նախագծային փաստաթղթերը սահմանված կարգով համաձայնեցնելու և սույն կարգին համապատասխան նոր թույլտվություն ստանալու համար:

127. Սույն որոշման N4 հավելվածով սահմանված միջին դիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողությունը կարող է փոխարինվել շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի երաշխավորագրով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի N775-Ն և 2009 թվականի հուլիսի 2-ի N777-Ն որոշումներով սահմանված պահանջների ապահովման պայմանով:

128. Կառուցապատողը շինարարության ընթացքում պարտավոր է 5-օրյա ժամկետում՝ սույն կարգի 125-րդ կետում նշված մարմիններին տեղեկացնել շինարարության թույլտվության և (կամ) N5 հավելվածի N2-5 ձևի տեղեկանքի տվյալների (այդ թվում կառուցապատվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման) փոփոխման մասին:

129. Եթե կառուցապատողն աշխատանքների կատարման ընթացքում թույլ է տվել սույն կարգի 128-րդ, 129-րդ և 131-րդ կետերով սահմանված դրույթների խախտում, ապա խախտումը բացահայտվելու պահից շինարարության թույլտվության գործողությունը համարվում է կասեցված՝ մինչև կասեցման պատճառների վերացումը: Ընդ որում, կասեցումը հիմք չէ շինարարության թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու համար:

130. Առանց շինարարության թույլտվության կարող են կատարվել միայն սույն N4 հավելվածի N1 ցանկով սահմանված ցանկում (այսուհետ՝ ցանկ) ներառված ցածր դիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտները (շինարարական աշխատանքները): Ցանկում աստղանիշով (*) նշված՝ շենքերի արտաքին տեսքը փոփոխող ընթացիկ նորոգման, ինչպես նաև ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման աշխատանքների իրականացման համար (եթե բարեկարգման աշխատանքներ իրականացնողն իրավասու մարմինը չէ)՝

- 1) դիմողը կազմում է էսքիզային նախագիծ և N5 հավելվածի N4-3 ձևի դիմումով այն ներկայացնում Համայնքի ղեկավարին.
- 2) իրավասու մարմինը դիմումը ստանալու օրվանից 5-օրյա ժամկետում տալիս է համաձայնություն կամ մերժում այն.
- 3) մերժման դեպքում կրկնակի դիմելու և իրավասու մարմնի ներկայացրած պահանջները դիմողի կողմից կատարվելու դեպքում՝ համաձայնության տրամադրման հարցը քննարկվում է ոչ ավելի, քան եռօրյա ժամկետում:

131. Սույն կարգի 133-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նշված ժամկետում Համայնքի ղեկավարի կողմից դիմումին չարձագանքելը համարվում է համաձայնության ստացում («լուռ համաձայնությամբ»):

132. Պատմամշակութային հուշարձաններին առնչվող դեպքերում սույն կարգի 133-րդ կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերն իրավասու մարմինը 3-օրյա ժամկետում ներկայացնում է պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմնի համաձայնեցմանը, որի՝ 5-օրյա ժամկետում իրավասու մարմնին ներկայացված կարծիքը հիմք է հանդիսանում դիմողին համաձայնություն տալու, դիտողություններով լրամշակման վերադարձնելու կամ մերժելու համար: Սույն կետով նախատեսված դեպքերում համաձայնության տրամադրման հարցը քննարկվում է ոչ ավելի, քան 10-օրյա ժամկետում:

VII. ԱՎԱՐՏՎԱԾ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԳՐՈՒՄ (ԾԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ)

133. Ավարտված շինարարության շահագործման ընդունումը փաստագրվում է շահագործման ակտի (շահագործման թույլտվության) ձևակերպմամբ՝ համաձայն N5 հավելվածի N3-2 ձևի, հաստատված նախագծով ու համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության հետ կնքված շինարարական կապալի պայմանագրով նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվելուց և սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան այն ընդունվելուց հետո:

134. Ավարտված շինարարական օբյեկտի համապատասխանությունը հաստատված նախագծին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին երաշխավորվում է օբյեկտը

շահագործման ընդունող հանձնաժողովի ակտով (այսուհետ՝ ընդունող հանձնաժողովի ակտ)՝ համաձայն N5 հավելվածի N3-3 ձևի և փաստագրվում Համայնքի ղեկավարի կողմից շահագործման թույլտվությամբ (ավարտված շինարարության շահագործման ակտով):

135. Օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կազմում ներգրավվում են կառուցապատողի, կապալառուի, տեխնիկական հսկողություն (օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ հեղինակային հսկողություն) իրականացնող անձինք, Համայնքի ղեկավարի, քաղաքաշինական պետական տեսչության, օրենքով համապատասխան վերահսկողական իրավասություններով օժտված պետական լիազորված շահագրգիռ մարմինների (այսուհետ՝ շահագրգիռ պետական մարմին) և ինժեներական սպասարկման ծառայություններ մատուցող ու տեխնոլոգիական սարքավորումները, ենթակառուցվածքային օբյեկտներն ու ցանցերը շահագործող կազմակերպությունների (այսուհետ՝ մատակարար կազմակերպություններ) կազմակերպությունների ներկայացուցիչները:

136. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ բարձրագույն ռիսկայնության աստիճանի (V կատեգորիայի) դասակարգում ունեցող յուրաքանչյուր առանձին օբյեկտի համար շինարարական կապալի պայմանագրով կատարված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է այդ որոշմամբ ստեղծված ժամանակավոր ընդունող հանձնաժողովի կողմից՝ անհրաժեշտության դեպքում սույն կարգը լրացնող հատուկ պահանջների ամրագրմամբ, եթե միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ընդ որում, ժամանակավոր հանձնաժողովում, ի լրումն սույն կարգի 138-րդ կետով նշված մասնակիցների, կարող են ընդգրկվել նաև այլ մարմինների, շահագրգիռ կողմ հանդիսացող այլ երկրների ներկայացուցիչներ, միջազգային փորձագետներ և մասնագետներ:

137. Մատակարար կազմակերպությունները ներգրավվում են հանձնաժողովի կազմում, եթե շահագործման հանձնվող օբյեկտի համար անհրաժեշտ է կնքել համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագիր կամ առկա պայմանագրում կատարել փոփոխություն (սույն կարգին համապատասխան տրամադրվել են տեխնիկական պայմաններ): Ընդ որում, մատակարար կազմակերպություններին վերաբերող սույն կարգով սահմանված դրույթները գործում են օրենքով և կանոնադրությամբ այդ կազմակերպություններին վերապահված իրավասությունների սահմաններում:

138. Շինարարության յուրաքանչյուր փուլում կատարված աշխատանքների (այդ թվում՝ թաքնված) որակի, տեխնոլոգիական հերթականության, օգտագործվող նյութերի, կոնստրուկցիաների և դրանց մասերի, ինժեներական սարքավորումների որակի համապատասխանությունը նախագծային փաստաթղթերին, տեխնիկական պայմաններին ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին հիմնավորվում է կատարողական փաստաթղթերի (ակտերի) ձևակերպմամբ և շինարարության վարման մատյանում գրանցմամբ: Անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում կատարողական ակտերը չեն ստորագրվում և հաջորդական աշխատանքներ չեն կատարվում՝ մինչև հայտնաբերված թերությունների վերացումը:

139. Կատարողական փաստաթղթերի (այսուհետ՝ կատարողական ակտեր) կամ դրանց մի մասի բացակայության դեպքում կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին վերականգնել դրանք՝ անհրաժեշտ տեխնիկական հետազոտություններ կամ փորձարկումներ կատարելու միջոցով:

140. Կատարողական ակտերի փաթեթը կազմում է կապալառուն՝ շինարարության բոլոր փուլերում տեխնիկական հսկողություն (պայմանագրով նախատեսված դեպքերում՝ նաև հեղինակային հսկողություն) իրականացնող անձանց, ինչպես նաև տվյալ օբյեկտը շահագործող կազմակերպության ներկայացուցչի (որպես դիտորդի) մասնակցությամբ: Կատարողական ակտերի կազմն ու ձևերը սահմանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը:

141. Եթե օրենքով և սույն կարգով սահմանված դեպքերում II-րդ կատեգորիայի օբյեկտի տեխնիկական հսկողությունը փոխարինվել է շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառու կազմակերպության երաշխավորագրով, ապա տեխնիկական հսկողությանը վերապահված գործառույթներն իրականացնում է համապատասխան լիցենզիա ունեցող կապալառու կազմակերպությունը:

142. III-րդ, IV-րդ և V-րդ ռիսկայնության (կատեգորիայի) օբյեկտներ կառուցելու դեպքում՝ շինարարական աշխատանքների կապալառու կազմակերպությունը չի կարող իրականացնել այդ աշխատանքների տեխնիկական

հսկողությունը և չի կարող ներգրավվել այդ աշխատանքներին՝ անկախ տեխնիկական հսկողություն իրականացնելու լիցենզիա ունենալու հանգամանքից:

143. Կառուցապատողը շինարարությունն ավարտվելուն պես դիմում է Համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարական օբյեկտի վերաբերյալ շահագործման թույլտվություն ստանալու դիմումով (N5 հավելված N3-1 ձև), կցելով հաստատված նախագծային փաստաթղթերի, նախագծման թույլտվության (առաջադրանքի), շինարարության թույլտվության մեկ օրինակից պատճենները, շինարարության վարման մատյանը, կատարողական ակտերի փաթեթը, սույն կետով նշված ձևաթղթով սահմանված այլ տեղեկություններն ու ավարտված շինարարական օբյեկտի նկատմամբ իրավունքի պետական գրանցման և(կամ) օբյեկտի շահագործման սահմանափակումը դադարեցնելու համար՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ իրավահաստատող փաստաթղթերը:

144. Համայնքի ղեկավարը, օբյեկտի շահագործման թույլտվության ձևակերպման նպատակով իր ղեկավարությամբ ձևավորում է հանձնաժողովի կազմը՝ կառուցապատողից շահագործման թույլտվության դիմումը ստանալու օրվանից եռօրյա ժամկետում հարցում ներկայացնելով սույն կարգի 138-րդ կետով նշված մարմիններին՝ հանձնաժողովի աշխատանքներում ներգրավվելու մասին, որի վերաբերյալ եռօրյա ժամկետում ստանում է համապատասխան ներկայացուցչի թեկնածությունը:

145. Համայնքի ղեկավարի կողմից շահագործման թույլտվության դիմումը կարող է մերժվել միմիայն սույն կարգի 146-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու և շինարարության թույլտվության ժամկետը սպառվելու հիմքերով, որի մասին կառուցապատողին եռօրյա ժամկետում ծանուցվում է գրավոր՝ նշելով մերժման պատճառները:

146. Պատմամշակութային հուշարձանների ամրակայման, նորոգման ու վերականգնման ավարտված աշխատանքներն ընդունող հանձնաժողովի կազմում, բացի սույն կարգի 138-րդ կետով նշված անձանցից (ներառյալ պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմնի ներկայացուցիչը), ընդգրկվում են նաև գիտանախագծային ու գիտավերականգնող կազմակերպությունների ներկայացուցիչները:

147. Ընդունող հանձնաժողովում ներգրավված շահագրգիռ պետական մարմինների կազմը տարբերակվում է՝ կախված տվյալ օբյեկտի նշանակությունից և ռիսկայնության աստիճանից, ընդ որում՝ բարձր ռիսկայնության աստիճանի դասակարգում ունեցող (IV կատեգորիայի) հատուկ և կարևորագույն բոլոր օբյեկտների համար պարտադիր է հրդեհային և տեխնիկական անվտանգության ու հիգիենիկ և հակահամաճարակային պետական տեսչությունների ներկայացուցիչների մասնակցությունը:

148. Բարձր ռիսկայնության աստիճանի դասակարգում ունեցող (IV կատեգորիայի) հատուկ և կարևորագույն օբյեկտների ընդունող հանձնաժողովի աշխատանքներին պետական տեսչական գործառույթներ իրականացնող այլ մարմինների մասնակցությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և օրենսդրական այլ ակտերով այդ մարմիններին վերապահված լիազորություններով՝ կախված կառուցապատվող օբյեկտի նշանակությունից:

149. Սույն կարգի 138-րդ կետով նշված տեսչական մարմիններն իրենց գործառույթներն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ռիսկայնությունը որոշող չափանիշների հիման վրա:

150. Ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց գանձվում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված փոխհատուցման վճար:

151. Շահագրգիռ պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությունը հանձնաժողովի աշխատանքներին կատարվում է նրանց պաշտոնական պարտականությունների կատարման շրջանակներում և կառուցապատողի կողմից չի վարձատրվում:

152. Սույն կարգի 146-րդ կետով նշված փաստաթղթերի կազմման և հանձնաժողովի աշխատանքի հետ կապված այլ հնարավոր ծախսերը (տրանսպորտ, գործուղում և այլն) կատարվում են կառուցապատողի միջոցների հաշվին:

153. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի (այդ թվում՝ պետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ կառուցվող օբյեկտների դեպքում՝ կառուցապատողի գործառույթներն ստանձնում է ծրագիրն իրականացնող պետական հիմնարկը՝ սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

154. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին կառուցվող շինարարական օբյեկտներն ընդունող հանձնաժողովների կազմում լրացուցիչ ընդգրկվում են նաև՝

- 1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներկայացուցիչը (գնումների բազային միավորի 250-ապատիկը գերազանցող դեպքերում),
- 2) համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչը:

155. Հանձնաժողովի ստեղծման մասին իրավասու Համայնքի ղեկավարը ծանուցում է կառուցապատողին սույն կարգի 146-րդ կետով սահմանված դիմումը ստանալու օրվանից 5-օրյան ժամկետում, որին հաջորդող օրը համարվում է հանձնաժողովի աշխատանքի սկիզբ:

156. Հանձնաժողովի աշխատանքների տևողությունը (ներառյալ՝ հնարավոր թերությունների վերացումը) չի կարող գերազանցել շինարարության թույլտվությամբ շինարարական աշխատանքների ավարտը սահմանող ժամկետը և կազմում է՝

- 1) II կատեգորիայի օբյեկտների համար՝ 5 օր.
- 2) III կատեգորիայի օբյեկտների համար՝ 10 օր.
- 3) IV կատեգորիայի օբյեկտների համար՝ 15 օր:

157. Հանձնաժողովի անդամները, յուրաքանչյուրն իր իրավասությունների մասով, հավաստում են ավարտված շինարարական օբյեկտի համապատասխանությունը նախագծային և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին, փորձարկում ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, հեռահաղորդակցության համակարգերի, տեխնոլոգիական սարքավորումների աշխատանքը:

158. Հանձնաժողովի ակտը պետք է ստորագրված լինի հանձնաժողովի բոլոր անդամների կողմից, որոնցից յուրաքանչյուրն իր իրավասության սահմաններում պատասխանատվություն է կրում հանձնաժողովի կողմից ընդունված որոշման համար՝ օրենքով սահմանված կարգով:

159. Հանձնաժողովի անդամն ակտը չստորագրելու դեպքում հանձնաժողովի նախագահին է տրամադրում իր իրավասության սահմաններում արված դիտողությունները՝ նշելով արձանագրված թերությունները, որոնք եռօրյա ժամկետում անփոփոխ են հանձնաժողովի նախագահի կողմից և հանձնվում կառուցապատողին:

160. Նշված թերությունները պետք է վերացվեն կապալի պայմանագրով նախատեսված կարգով՝ հանձնաժողովի աշխատանքի համար սահմանված ժամկետում, այլապես օբյեկտը հանձնաժողովի կողմից շահագործման չի ընդունվում: Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետում արձանագրված թերությունները չվերացնելը հանգեցնում է օրենքով և սույն կարգի 120-ից 123-րդ կետերով սահմանված հետևանքներին:

161. Թերությունները վերացնելուց հետո (դրանց առկայության դեպքում) հանձնաժողովի բոլոր անդամների (բացառությամբ՝ հանձնաժողովի նախագահի) կողմից ստորագրված ավարտված շինարարության ընդունման հանձնաժողովի ակտին կցվում են կառուցապատողի կողմից «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղական վճարի, ինչպես նաև համապատասխան որակավորման վկայական ունեցող անձի կողմից կառուցապատողի հետ կնքված

պայմանագրով կատարված չափագրման (հաշվառման) նյութերը, իրավունքների պետական գրանցման համար օրենքով սահմանված պետական տուրքի ու պետական գրանցման համար վճարի մուծման անդորրագրերը:

162. Համայնքի ղեկավարը սույն կարգի 164-րդ կետով նշված փաստաթղթերը ստանալու հաջորդ օրը ստորագրում է հանձնաժողովի ակտը և ձևակերպում շահագործման թույլտվությունը՝ համաձայն N5 հավելվածի N3-2 ձևի, դրա մասին ծանուցելով կառուցապատողին:

163. Շահագործման թույլտվությունը կազմվում է 4 օրինակից, որոնցից մեկը մնում է Համայնքի ղեկավարի մոտ, մեկական օրինակ եռօրյա ժամկետում տրվում է կառուցապատողին, կապալառուին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային մարմնին:

164. Պատմամշակութային հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների դեպքում սույն կարգի 166-րդ կետով նշված փաստաթղթերի լրացուցիչ՝ 5-րդ օրինակը հանձնվում է պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան:

165. Իրավասու մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային մարմնին տրամադրվող շահագործման թույլտվությանը կցվում են նաև սույն կարգի 146-րդ և 164-րդ կետերով նշված՝ ավարտված շինարարական օբյեկտի նկատմամբ իրավունքի պետական գրանցման և (կամ) օբյեկտի շահագործման սահմանափակումը դադարեցնելու համար՝ օրենքով սահմանված անհրաժեշտ իրավահաստատող փաստաթղթերը, այդ թվում՝ իրավունքի պետական գրանցում հայցող իրավատիրոջ դիմումը և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում՝ համապատասխան որակավորման վկայական ունեցող անձի կողմից կառուցապատողի հետ կնքված պայմանագրով կատարված չափագրման (հաշվառման) նյութերը:

166. Համայնքի ղեկավարը շահագործման թույլտվությունը ձևակերպելուց հետո եռօրյա ժամկետում դրա մասին ծանուցում է համապատասխան մարզպետին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական պետական տեսչությանը՝ կցելով շահագործման թույլտվության պատճենը:

167. Սույն կարգով սահմանված՝ ընդունող հանձնաժողովի ակտն ստորագրվելուց հետո այդ օբյեկտում տվյալ շինարարությանը վերաբերող այլ ստուգումներ չեն կատարվում՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության և վերահսկողության գործառույթների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ ավարտական արձանագրության կազմման դեպքի:

168. Կառուցապատողի ցանկությամբ քաղաքաշինական համալիրի կազմում ընդգրկված առանձին շենքերի և շինությունների շահագործման ընդունումը կարող է ձևակերպվել ըստ դրանց շինարարության ավարտի:

169. Ձմռան ամիսներին ձևակերպվող շահագործման ակտով կարող է նախատեսվել շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքները մոտակա գարնանային-ամառային ամիսներին իրականացնելու վերաբերյալ պայման: Այդ աշխատանքներն ավարտվում են շահագործման ակտով սահմանված ժամկետում և ընդունվում կառուցապատողի կողմից իրավասու մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ՝ համապատասխան նշում կատարելով շահագործման թույլտվության մեջ:

170. Շինարարական կապալի պայմանագրով կարող է նախատեսվել անհատական բնակելի տների և դրանց կից տնտեսական շինությունների, ինչպես նաև առևտրային իրացման նպատակով կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերի, այդ թվում՝ ներկառուցված ոչ բնակելի տարածքներով, շինարարական աշխատանքների ոչ լրիվ իրականացումը, որի դեպքում շահագործման թույլտվությունը ձևակերպվելուց հետո շինարարության թույլտվություն չպահանջող ներքին հարդարման աշխատանքները՝ (N4 հավելվածի N1 ցանկ) կարող են կատարվել նոր սեփականատիրոջ կողմից, ընդ որում, բազմաբնակարան բնակելի շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների շինարարական աշխատանքները, փոստային բաժանորդային պահարանների

տեղադրումն ու ինժեներատեխնոլոգիական սարքավորումների մոնտաժման և գործարկման աշխատանքները պարտադիր պետք է իրականացվեն ամբողջությամբ:

171. Ավարտված շինարարական օբյեկտի շահագործումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխան:

ԱՇԽԱՏԱՎԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս.ԹԱՐԹԻԿՅԱՆ

